

բեմ անոնց ընդհանուր առումով մեծ հա-  
մարտմ ունին Երոպացիներուն վրայ: Հայ ազգը պէտք է առաջին տեղը բռնէ  
այս համարումն մէջ, բոլորովին չէղոց  
մալով այս կամ այն օտար պետութեան  
մը շարժումներէն՝ ի մասին Եթովպիոյ:  
Հարեշխատանի Հայերը պէտք է հետեւա-  
րար, ինչպէս վերը ըսի, ամէն միջոցնե-

բով երկրին օգտակար ըլլալու աշխատին  
միայն: Ալդէն կառավարութիւնը՝ հայ ժո-  
ղովութիւնը վրայ ունեցած իր համարու-  
մով՝ մեծ պաշտօններու կոչած է և կը  
կոչէ մեր ազգակիցներէն կարող անձնա-  
ւորութիւններ:

Ու մենց արժանի ենց միշտ այս վրա-  
տահութեան:

Մաք. Յանը Գրիգոր

### ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

... Խմբագիր «Բազմավկա»ի

«Բազմավկա»ի ներկայ տարւոյ Յուլիան  
րույն մէջ՝ մեծ համուրիւն ունեցայ կարդա-  
րյ Ցիար Յակոր Գրիգորի ոսումնալից և  
հետաքրքրական յօդուածն, նիւր ունենարով  
«Երովովիա, Հայ Եկեղեցին և Հայերը»:

Խօսկով Երովովական ձեսագիրների մասին,  
գիտնական Յօդուածագիրն յիշում է (տես  
«Բազմավկա», Յուլիս, Էջ 222, ա. սինակ) րէ  
«Լոնդոնի բանգարակին մէջ հարեշական  
ձեսագիր մը կայ, որուն վերջաւորութեան  
հայերէն բառեր այ իր գտնուին. դժբախտա-  
րա ձեսագիրը տեսած լրջալով պիտի լկր-  
նամ ըսկի, րէ անոր մէջ ինչ բամի մասին կը  
խօսուի»: Յիշեալ ձեսագիրն (որ կրում է բրի-  
տանական բանգարակն բուռնաշան Օր. 743) և  
այսօր անձամբ աչք անցուցի: Խոչոր հա-  
տոր մի և այլայլ կտակարանական նիշերի վե-  
րաբերութեամբ և բովանդակում է 278 թերթեր,  
որոյ վերջները երկու թերթերի մէջ տեսանելի  
են Հայերէն բառերն (գրուած Երովովական լեզու-  
աւ), որոյ մասին խօսում է Զեր Յարգելի Յօդ-  
ուածագիրն: Ես, ինքնին, անտեղեակ եմ Ե-

րովովական լեզուին, բայց բանգարակի Այրե-  
շեան Մասնաձիւի հմուտ վերասկսուն հանձ-  
ցաւ կարդալ ինձ համար այդ Հայերէն բանդի  
մի քանիսն (ի հարկէ փոքր ինչ աղաւաղեալ,  
ըստ Երովովական հնման): Այդ բառերն են (ա),  
Հայերէն բուռնամարներն: մէկ, երկու, երեք,  
չորս, հինգ, վեց, եօթն, ութ, ինչն, տասն, քասն,  
երեսուն, քառասուն, յիսուն, քաթսուն, եօթա-  
նասուն, ութսուն, որոց զինի փոխարքն յինե-  
լոյ իննուուն և հարիւր գրուած է ութսուն (բայց,  
ըստ գրուածոյն և ձայնին, անձնան հայրեն-  
րաց ութսունին. (բ), կարի սահմանափակ  
Հայերէն բառարան մի, որոր օրինակ՝ Հայր,  
Որդի, Հոգի Սուրբ, Աստուած, Աւետարան, և  
այլն: Երանի րէ ժամօր յինէի Երովովական  
լեզուին, որպէս զի վատահանայի աւելի գոհա-  
ցուցիչ տեղեկութիւն տալ այս մասին, բայց  
կարծեմ որ այս հակիրա հմուշներովն իսկ Զեր  
Յարգելի Յօդուածագիրն կարող պիտի յինի  
գաղափար մի կազմել րէ այդ Հայերէն բառերն:  
ինչ են այդ Հայերէն բառերն:

Ա. Տէր Մ. Գրիգորյան

